



**2003թ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ
ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ**

2003թ. Երևան

Ծրագիրն իրականացվել է՝

Տարածաշրջանային զարգացման կենտրոն/
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հայաստանյան մասնաճյուղի կողմց

Ծրագրի տնօրեն՝ *Ամալյա Կոստանյան*

Ծրագրի փորձագետներ՝ *Արևիկ Սարիբեկյան*
Վարուժան Հոկտանյան

Ծրագրի մասնագետներ՝ *Աննա Արուճյան*
Վախթանգ Սիրադեղյան

Իրավախորհրդատու՝ *Դավիթ Սարգսյան*

Թարգմանիչ/իմբագիրներ՝ *Սոնա Այվազյան*
Անահիտ Բարսեղյան

Ծրագիրը ֆինանսավորվել է՝



Բաց հասարակության ինստիտուտ, Օժանդակության հիմնադրամի հայաստանյան
մասնաճյուղի կողմից

© 2003թ. Տարածաշրջանային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ
հայաստանյան մասնաճյուղ

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 375010

Նալբանդյան 5, սենյակ 35, 36

Հեռախոսներ՝ (374 1) 585 578, 526 914

Ֆաքս՝ (374 1) 585 578

Էլեկտրոնային փոստ՝ crd@transparency.am

Ինտերնետային էջ՝ www.transparency.am

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ	5
Տերմինների սահմանում	5
Ընդհանուր տեղեկություններ	6
Իրավական դաշտի համառոտ վերլուծություն	8
ՀՀ Ընտրական օրենսգիրք	8
«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենք	9
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՄ	10
Կուսակցությունների և տարբեր հաստատությունների հետ համագործակցությունը	10
Կուսակցություններ	10
ԿԸՀ և Վերստուգիչ-վերահսկիչ ծառայություն	11
Չանգվածային լրատվամիջոցներ	11
Հրատարակչություններ	12
Անկախ մոնիտորինգ	13
Լրատվամիջոցներ	13
Զարոգչական նյութեր	13
Համեմատական վերլուծություն	14
ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	15
ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ	19
ՀԱՎԵԼՎԱԾ 1. Վերստուգիչ-վերահսկիչ ծառայության կողմից տրամադրված տվյալներ	20
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Անկախ մոնիտորինգի տվյալներ	22
ՀԱՎԵԼՎԱԾ 3. Վերջնական համեմատական տվյալներ համագործակցած կուսակցությունների վերաբերյալ	34
ՀԱՎԵԼՎԱԾ 4. Վերջնական համեմատական տվյալներ չհամագործակցած կուսակցությունների վերաբերյալ	46
ՀԱՎԵԼՎԱԾ 5. Ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները	52

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդյունավետ և գործուն ժողովրդավարությունը ենթադրում է ոչ միայն ազատ և արդար ընտրություններ, այլև նաև քաղաքական գործընթացում քաղաքացիների ակտիվ և մշտական մասնակցություն: Դրա հիմքը կարող է հանդիսանալ կուսակցությունների ֆինանսների վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը հանրության համար: Սույն հրապարակումն անդրադառնում է հանրության կողմից կուսակցությունների ֆինանսների մոնիտորինգին՝ որպես քաղաքական գործիչների հաշվետվելիության ապահովման արդյունավետ միջոց, որը նպաստում է քաղաքական կոռուպցիայի կանխարգելմանը և կառավարման բաց ու վստահելի համակարգի ստեղծմանը: Համաշխարհային փորձը վկայում է կուսակցությունների ֆինանսավորման արդյունավետ և չարաշահումներից զերծ համակարգի ստեղծման հետ կապված հսկայական բարդությունների մասին: Այնուամենայնիվ, գոյություն ունեն բազմաթիվ փաստեր, որոնք վկայում են կուսակցությունների ֆինանսավորման գործընթացի արդյունավետ կարգավորման հնարավորությունը, եթե ընտրված մեխանիզմը հիմնվում է գործուն օրենսդրության, պատշաճ բարոյական նորմերի վրա, ինչպես նաև ապահովում է կուսակցությունների եկամուտների և ծախսերի նկատմամբ հանրային վերահսկողությունը:

2003թ. մարտ-հունիս ամիսների ընթացքում, Տարածքային զարգացման կենտրոն/Թրանսփարենսի Ինթերնեշնլ հայաստանյան մասնաճյուղը (ՏԶԿ/ԹԻ հայաստանյան մասնաճյուղը) իրականացրել է «2003թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում կուսակցությունների քարոզարշավի ֆինանսական միջոցների մոնիտորինգ» ծրագիրը, որը ֆինանսավորվում էր Բաց հասարակության ինստիտուտ, Օժանդակության հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի կողմից: Ծրագրի նպատակն էր՝ նպաստել կուսակցությունների ֆինանսական միջոցների թափանցիկ և հաշվետու համակարգի ստեղծմանը, այսպիսով խթանելով հրապարակային բանավեճերը և քաղաքացիական հասարակության կողմից ճնշումը՝ ապահովելու ազնիվ և արդար ընտրություններ: Ոլորտում թափանցիկության բացակայությունը, ընտրարշավի ընթացքում ստվերային գործառնությունների աճը, կուսակցությունների նկատմամբ վստահության պակասը և օրենքի կիրարկման համար քաղաքական կամքի բացակայությունը հանդիսանում են սույն ծրագրի նախաձեռնման հիմնական շարժառիթները:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում էր համագործակցել կուսակցությունների հետ ստանալու համար տեղեկություններ նրանց նախընտրական հիմնադրամների մուտքերի և ելքերի վերաբերյալ, անցկացնել քարոզարշավի ընթացքում կուսակցությունների եկամուտների և ծախսերի անկախ մոնիտորինգ, և իրականացնել տվյալների համեմատական վերլուծություն՝ բացահայտելու տվյալների հնարավոր հակասությունները: 2003թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցում էր քսանմեկ կուսակցություն և դաշինք, որից 11-ը պատրաստակամություն հայտնեց համագործակցել ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ներառում էր նաև համապատասխան

տեղեկությունների հավաքագրում ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովից (ԿԸՀ), զանգվածային լրատվամիջոցներից (2ԼՄ-ներից) և հրատարակչություններից:

Սույն հրապարակման մեջ ներառված են ծրագրի շրջանակներում կիրառված տերմինների սահմանումը, ինչպես նաև իրավիճակի համառոտ նկարագիրն ու համապատասխան օրենսդրական դաշտի ընդհանուր պատկերը: Այն նաև ընդգրկում է տեղեկատվություն ծրագրի մեթոդաբանության, տվյալների մշակման և համեմատական վերլուծության արդյունքների մասին: *Հավելված 1*–ում ներկայացված են ԿԸՀ-ի ներքո գործող Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից տրամադրված տվյալները: *Հավելված 2*–ում ներառված են անկախ մոնիտորինգի վերլուծության մանրամասն տվյալները, իսկ *Հավելված 3*–ում և *Հավելված 4*–ում ընդգրկված են ամբողջական համեմատական տեղեկություններ յուրաքանչյուր կուսակցության համար: Կուսակցությունների կողմից տրամադրված և անկախ մոնիտորինգի արդյունքում ձեռքբերված տվյալներում առկա հակասությունների մասին կուսակցությունների մեկնաբանությունները նույնպես ներկայացված են այս հրապարակման մեջ: Այն կուսակցությունների համար, որոնք չեն համագործակցել ծրագրի շրջանակներում, ներկայացված են միայն անկախ մոնիտորինգի արդյունքները:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ

Տերմինների սահմանում

Ծրագրի իրականացման ընթացքում ի հայտ եկան տերմինների կիրառման հետ կապված որոշակի բարդություններ, որոնք սահմանված չէին համապատասխան օրենսդրությամբ: Որոշ կուսակցություններ օգտվեցին այս օրենսդրական բացթողումից և այդ տերմինները մեկնաբանեցին իրենց գործողություններն արդարացնելու նպատակով: Ստորև ներկայացված են վերը նշված ծրագրում օգտագործված մի շարք սահմանումներ:

- ***Նախընտրական քարոզչության ժամանակահատված*** – ՀՀ Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն, նախընտրական քարոզչությունը սկսվում է կուսակցությունների գրանցման համար նախատեսված վերջին օրվա հաջորդ օրը և վերջանում է քվեարկությունից մեկ օր առաջ (*2003թ. -ի խորհրդարանական ընտրությունների նախընտրական քարոզարշավի ընդհանուր տևողությունը եղել է 33 օր*):

- ***Նախընտրական հիմնադրամ և կուսակցության հաշվեհամար*** – Նախընտրական հիմնադրամը ձևավորվում է կուսակցության կողմից նախընտրական քարոզչությունը ֆինանսավորելու նպատակով: Քարոզչության հետ կապված բոլոր ծախսերը կատարվում են այդ հիմնադրամից: Կուսակցության մշտական հաշվեհամարից, ըստ օրենսդրության, քարոզչական ծախսերի համար նախընտրական հիմնադրամին կարող է փոխանցվել միայն հաստատուն գումար:

- **«Քաղաքական գովազդ»** և **«Նախընտրական քարոզչական հաղորդում»** – Քանի որ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքը չի սահմանում այս տերմինները, ծրագիրն իրականացնող խումբը «քաղաքական գովազդ» է համարում կուսակցությունների կողմից պատրաստված և հեռուստաալիքներով հեռարձակված նյութը՝ իր սկզբնական տեսքով, առանց բովանդակային փոփոխության: «Նախընտրական քարոզչական հաղորդումը» հեռուստատեսային ծրագիր է, որի ժամանակ որևէ կուսակցության ներկայացուցիչ հրավիրվում է որպես հյուր՝ ներկայացնելու տվյալ կուսակցության ծրագրերը:
- **Քարոզչական նյութեր** – Ծրագիրն իրականացնող խումբը որպես քարոզչական նյութ է դիտարկում որևէ կուսակցության կողմից քարոզարշավի ընթացքում ձայներ ստանալու նպատակով ընտրազանգվածին բաժանված ցանկացած նյութ:

Ընդհանուր տեղեկություններ

ՀՀ Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն, ՀՀ օրենսդիր մարմինը միապալատ Ազգային ժողովն (ԱԺ) է, որն ընտրվում է մեծամասնական-համամասնական խառը ընտրակարգով: ԱԺ 131 մանդատներից 75-ը համամասնորեն բաշխվում է ընտրություններում 5%-ից ավելի ձայն հավաքած կուսակցությունների և դաշինքների միջև: 56 պատգամավոր ընտրվում է մեծամասնական ընտրակարգով՝ յուրաքանչյուր ընտրատարածքից մեկ պատգամավոր: Խորհրդարանական ընտրություններն անց են կացվում չորս տարին մեկ անգամ՝ Նախորդ գումարման ԱԺ-ի լիազորությունների ավարտին Նախորդող 60 օրվա ընթացքում: 2003թ. խորհրդարանական ընտրությունները երրորդն էին 1991թ. սեպտեմբերին անկախության հռչակագրի ընդունումից և առաջինը՝ 2001թ. հունվարին Եվրախորհրդին Հայաստանի անդամակցությունից հետո:

Ընտրությունների գործընթացը կարգավորվում է 1999թ. փետրվարի 5-ին ԱԺ-ի կողմից ընդունված ՀՀ Ընտրական օրենսգրքի հիման վրա, որը հետագայում ենթարկվել է մի շարք փոփոխությունների¹: Այն սահմանում է Նախագահական, խորհրդարանական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ողջ գործընթացը, ներառյալ՝ ֆինանսավորումը: Չնայած Ընտրական օրենսգրքից հանդիսանում է զգալի առաջընթաց Հայաստանի Նախկին ընտրական օրենսդրության համեմատ, այն դեռ հետագա բարելավման կարիք ունի, մասնավորապես՝ ընտրություններին մասնակցող կուսակցությունների միջև ազնիվ և արդար մրցակցություն ապահովելու և ողջ ընտրական գործընթացի թափանցիկությունը բարձրացնելու առումով:

1999թ. մայիսի խորհրդարանական ընտրություններին հաջորդած ժամանակահատվածում Հայաստանի քաղաքական դաշտում տեղի են ունեցել մի շարք փոփոխություններ: Դրա հիմնական պատճառը՝ 1999թ. հոկտեմբերի 27-ին ԱԺ-ում կատարված ահաբեկչական գործողությունն էր, որի ժամանակ սպանվեցին ԱԺ Նախագահին

¹ Վերջին փոփոխությունը կատարվել է 2002թ. հուլիսին:

ու հինգ պատգամավորներ և ՀՀ վարչապետն ու մեկ նախարար: Սա հանգեցրեց ղեկավարող՝ Հայաստանի Հանրապետական կուսակցությունն ու Հայաստանի Ժողովրդավարական կուսակցությունը միավորող «Միասնություն» դաշինքի պառակտմանը: Կուսակցությունների տրոհումը դարձավ համատարած երևույթ (օրինակ՝ *Կոմունիստական կուսակցություն, Ազգային ժողովրդավարական միություն և այլն*): Չգալիորեն ընդլայնվեց մեկ այլ հետքերի միտում. քաղաքական ասպարեզում ի հայտ եկան մի քանի փոքր և իներտ՝ անորոշ ծրագրերով կուսակցություններ:

Նշված երևույթները կարելի է դիտարկել որպես իշխանությունների կողմից ուժեղ քաղաքական կուսակցություններ ունենալու ցանկության բացակայություն: Կուսակցությունների թուլացումը և պառակտված խորհրդարանը նվազեցնում են ընդդիմության ազդեցությունը եւ գործադիրին հակակշռող ուժեղ ներկայացուցչական իշխանության դերը: Վերջապես, արժե նշել խորհրդարանական ընտրություններին գործարար շրջանակների մասնակցության ակտիվացումը: Խրախուսվում է ձեռներեցների և կլանային խմբերի ներգրավվածությունը ընտրական գործընթացում: Վերջիններս շահագրգռված են անդամակցել ԱԺ-ին՝ պաշտպանելու իրենց սեփականությունն ու գործարար շահերը, ինչպես նաև ձեռք բերելու պատգամավորական անձեռնմխելիություն՝ ապօրինի գործունեության համար սահմանված պատժից խուսափելու նպատակով²:

Նկարագրված վերջին զարգացումները, կուսակցությունների ոչ թափանցիկ կառավարման համակարգի հետ համատեղ, կուսակցությունների նկատմամբ հասարակության վստահության պակասի հիմնական պատճառներից են: Հասարակության մեջ գերիշխում է կուսակցությունների և նրանց գործունեության հանդեպ անտարբերությունը: ՏՀԿ/ԹԻ հայաստանյան մասնաճյուղի կողմից 2002թ. անցկացված «Հայաստանում կոռուպցիայի տարածվածության և դրսևորման գնահատումը. հասարակական կարծիքի ուսումնասիրության» արդյունքները ցույց են տվել, որ տնային տնտեսությունների 17,5%-ի և գործարարների ընդամենը 2,5%-ի կարծիքով կոռուպցիայի կրճատման գործում կուսակցությունները կարող են որոշիչ դեր խաղալ: 2003թ. մարտ-ապրիլ ամիսներին Ժողովրդավարության և խաղաղության կենտրոնի և Համալսարանական կրթությամբ կանանց միության կողմից համատեղ իրականացված մեկ այլ հետազոտությամբ պարզվել է, որ հարցվողների 50,6%-ը չեն վստահում կուսակցություններին: Վերջիններիս նկատմամբ հասարակության նման վերաբերմունքը արժեզրկում է Ժողովրդի քաղաքական կամքի ձևավորման և արտահայտման խթանման մասին ՀՀ Սահմանադրության դրույթը:

² ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն, ԱԺ պատգամավորին չի կարելի ձերբակալել և ենթարկել քրեական և վարչական հետապնդման առանց ԱԺ-ի համաձայնության:

Իրավական դաշտի համառոտ վերլուծություն

Կուսակցությունների նախընտրական ֆինանսավորումը Հայաստանում կարգավորվում է հիմնականում Ընտրական օրենսգրքով և այլ իրավական ակտերով: Ստորև ներկայացված են Ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի համապատասխան դրույթները:

ՀՀ Ընտրական օրենսգիրք

Նախընտրական քարոզչություն – ՀՀ Ընտրական օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն, նախընտրական քարոզչության ընթացքում բոլոր կուսակցությունների և թեկնածուների համար պետք է երաշխավորվեն ՉԼՄ-ներից օգտվելու հավասար պայմաններ՝ *եթերաժամանակ, տարածք, սակագին և այլն*: Օրենսգրքի 20-րդ հոդվածը սահմանում է, որ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին քաղաքական գովազդի համար հավասար պայմաններով տրամադրվում է անվճար եթերաժամ, իսկ ըստ 18-րդ հոդվածի՝ դրա տևողությունը կազմում է 60 րոպե՝ հանրային հեռուստատեսությամբ և 120 րոպե՝ հանրային ռադիոյով: 21-րդ հոդվածը սահմանում է, որ կուսակցությունները և թեկնածուներն իրավունք ունեն հրապարակել և տարածել պաստառներ, թերթիկներ և քարոզչական այլ նյութեր: Ըստ օրենսդրության, բոլոր տպագիր նյութերի վրա պետք է նշված լինեն տպագրող կազմակերպության անվանումը և տպաքանակը:

Ֆինանսավորում – ՀՀ Ընտրական օրենսգրքի 5-րդ գլուխն անդրադառնում է ընտրությունների ընթացքում կուսակցությունների ֆինանսավորման հարցերին: 24-րդ հոդվածի համաձայն, ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու, ինչպես նաև ընտրական հանձնաժողովների գործունեության ծախսերը կատարվում են պետական բյուջեի հաշվին: 25-րդ հոդվածը վերաբերում է քարոզչության ընթացքում կուսակցությունների և թեկնածուների ֆինանսական միջոցների տնօրինմանը: Համաձայն այդ հոդվածի, քարոզչության հետ կապված ծախսերի իրականացման համար անհրաժեշտ է ձևավորել նախընտրական հիմնադրամ: Ի տարբերություն մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուների՝ կուսակցություններն իրենց հիմնադրամները պետք է բացեն ՀՀ Կենտրոնական բանկում: Կենտրոնական բանկը եռօրյա պարբերականությամբ տեղեկանք է ներկայացնում ԿԸՀ կուսակցությունների հիմնադրամներում կատարված գործառնությունների մասին:

Օրենսգրքի 112-րդ հոդվածով նախատեսվում են նախընտրական հիմնադրամի վերին սահմանի և մուտքերի ահմանափակումներ: Հիմնադրամի չափը սահմանված է ՀՀ-ում նվազագույն աշխատավարձի (*ինչը ներկայումս կազմում է 1,000 դրամ*) 60,000-ապատիկի չափով, որը 2003թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում կազմում էր 60 մլն

դրամ (*մոտավորապես 102,000 ԱՄՆ դոլար*³): Հիմնադրամը ձևավորվում է կուսակցության ֆինանսական միջոցներից (*նվազագույն աշխատավարձի 2,000-ապատիկի չափով՝ 2,000,000 դրամ կամ մոտավորապես 3,390 ԱՄՆ դոլար*) և ֆիզիկական (*նվազագույն աշխատավարձի 50-ապատիկի չափով՝ 50,000 դրամ կամ մոտավորապես 89 ԱՄՆ դոլար*) կամ իրավաբանական (*նվազագույն աշխատավարձի 150-ապատիկի չափով՝ 150,000 դրամ կամ մոտավորապես 254 ԱՄՆ դոլար*) անձանց կամավոր մուծումներից:

Ըստ, 25-րդ հոդվածի, կուսակցություններին նախընտրական հիմնադրամներում մուծումներ կատարելու իրավունք չունեն պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, բյուջետային հիմնարկները, օտարերկրյա ֆիզիկական և իրավաբանական անձինք, քաղաքացիություն չունեցող անձինք, պետական բաժնեմաս և 30%-ից ավել օտարերկրյա բաժնեմաս ունեցող ձեռնարկությունները, բարեգործական և կրոնական կազմակերպությունները, միջազգային կազմակերպությունները և միջազգային հասարակական շարժումները: Արգելվում են նաեւ անանուն և կանխիկ մուծումները: Ի դեպ, եթե քարոզչության ընթացքում կուսակցությունը, բացի նախընտրական հիմնադրամի միջոցներից, օգտագործում է նաև այլ միջոցներ, ապա ԿԸՀ-ի դիմումի հիման վրա դատարանը կարող է ուժը կորցրած ճանաչել տվյալ կուսակցության ընտրական ցուցակի գրանցումը:

Վերահսկողություն և հայտարարագրում – Ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն, կուսակցությունները, ոչ ուշ քան ընտրությունների ավարտից 15 օր հետո ԿԸՀ-ին ներկայացնում են հայտարարագիր քարոզչական ծախսերի մասին: Եռօրյա ժամկետում այդ հայտարարագրերն ուղարկվում են Վերահսկիչ-վերստուգիչ ծառայություն, որը պատասխանատու է կուսակցությունների նախընտրական հիմնադրամների և ընտրությունների կազմակերպման համար ԿԸՀ-ին հատկացված ֆինանսական միջոցները վերահսկելու համար: Հայտարարագրերը ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում դրանք ստուգվում են և արդյունքները ներկայացվում են ԿԸՀ-ին: Խախտումների հայտնաբերման դեպքում, ԿԸՀ-ի որոշմամբ եռօրյա ժամկետում համապատասխան նյութերն ուղարկվում են առաջին ատյանի դատարան:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենք

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը սահմանում է, որ քարոզարշավի ժամանակ բոլոր քաղաքական հաղորդումների ընթացքում հեռուստատեսության վրա պետք է երևա «*քաղաքական գովազդ*» կամ «*նախընտրական քարոզչական հաղորդում*» լուսագիրը: Ռադիոհաղորդումների ընթացքում ամսվազն երեք անգամ ունկնդիրներին պետք է հիշեցնել, որ տվյալ ծրագիրը քարոզչական հաղորդում է: Հոդվածը նաև նշում է, որ հեռուստառադիոընկերությունները պետք է նախօրոք հրապարակեն քաղաքական գովազդների կամ քարոզչական այլ հաղորդումների

³ Ծրագրի իրականացման ժամանակահատվածում 1 ԱՄՆ դոլարի փոխարժեքը հավասար է եղել շուրջ 590 դրամի:

սակագները: Բոլոր կուսակցությունների համար պետք է ապահովվեն հավասար պայմաններ: Օրենքի համաձայն, ծառայությունները պետք է տրամադրվեն պայմանագրային հիմունքներով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

Կուսակցությունների և տարբեր հաստատությունների հետ համագործակցությունը

Կուսակցություններ

Ծրագիրն իրականացնող խումբը հանդիպել է 2003թ. խորհրդարանական ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների հետ՝ ծրագրի նպատակներն ու խնդիրները ներկայացնելու համար: Քննարկվել է նաև քարոզարշավի ընթացքում կուսակցությունների եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ ստանալու հնարավորությունը: 21 կուսակցություններից և դաշինքներից, միայն 11-ը համաձայնվեց համագործակցել ծրագրի շրջանակներում. «Ազատական» դաշինք, «Ազգային համաձայնություն» կուսակցություն, «Աշխատանք, օրենք, միասնություն» կուսակցություն, «Արդարություն» դաշինք, «Արդարություն» կուսակցություն, «Արժանապատվություն, ժողովրդավարություն, հայրենիք» դաշինք, Հայաստանի նորացված կոմունիստական կուսակցություն, Զրիստոնեա-դեմոկրատական միություն, «Հայ արիների բռունցք» կուսակցություն, Հայ Յեղափոխական Դաշնակցություն և «Օրինաց երկիր» կուսակցություն:

Մնացած 10 կուսակցությունները և դաշինքները չեն համագործակցել՝ նշելով հետևյալ պատճառները.

- «Ազգային միաբանություն» կուսակցություն – խորհուրդ տվեցին տվյալները վերցնել ԿԸՀ-ից, քանի որ իրենք չափազանց զբաղված են:
- Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն – հետաքրքրված չէին ծրագրով:
- «Հայաստանի ռամկավար-ազատական» կուսակցություն – խուսափեցին ավելորդ «գլխացավանքից»:
- «Արդյունաբերողների և կանանց միություն» դաշինք – սկզբում համաձայնվեցին, հետագայում մերժեցին:
- Միավորված աշխատանքային կուսակցություն – խոստացան տեղյակ պահել կուսակցության ղեկավարության համաձայնության դեպքում, ինչը սակայն տեղի չունեցավ:
- Հայաստանի հանրապետական կուսակցություն – Կուսակցության ներկայացուցիչներն անընդհատ խոստանում էին տրամադրել համապատասխան տեղեկություններ, բայց ի վերջո չկատարեցին իրենց խոստումը:
- Հայաստանի կոմունիստական կուսակցություն – Չնաած համառ հեռախոսազանգերին և այցելություններին՝ պատասխանատու անձը չհանդիպեց ծրագրի փորձագետների հետ:

- *Ժողովրդական կուսակցություն, Հայոց համագգային շարժում, «Հզոր հայրենիք» կուսակցություն* – այս երեք կուսակցությունները խոստացան տրամադրել տվյալներ ընտրություններից հետո, սակայն հետագայում հրաժարվեցին:

ԿԸՀ և Վերստուգիչ-վերահսկիչ ծառայություն

Ծրագրի սկզբում նամակ էր ուղարկվել ԿԸՀ նախագահ Արտակ Սահրադյանին ծրագրի իրականացման ընթացքում համագործակցության և աջակցության խնդրանքով, մասնավորապես՝ տրամադրելու նախընտրական քարոզարշավի ընթացքում կուսակցությունների եկամուտների և ծախսերի վերաբերյալ մանրամասն տեղեկություններ և պարզաբանելու համապատասխան օրենսդրության որոշ դրույթներ: Պատասխան ստացվեց, որ ԿԸՀ-ն չի կարող համագործակցել չափազանց զբաղված լինելու պատճառով: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն տրամադրեց Ընտրական օրենսգրքի որոշ հոդվածների բացատրություններ: Ծրագրի իրականացման ընթացքում գրություն ուղարկվեց նաև Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության պետ Արա Հարությունյանին, որը համաձայնվեց համագործակցել, բայց կուսակցությունների ֆինանսական միջոցների մասին մանրամասն հաշվետվությունների փոխարեն տրամադրեց միայն ընդհանուր տվյալներ եկամուտների և ծախսերի մասին: Արժե նշել, որ այդ տվյալները հրապարակվել են նաև տեղական թերթերում: Այսպիսով, իրականում Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության հետ համագործակցությունը այնքան էլ արդյունավետ չի կարելի համարել: Այն կարևոր էր միայն այնքանով, որքանով տեղեկատվությունը ստացվել էր պաշտոնական աղբյուրից:

Ձանգվածային լրատվամիջոցներ

Գիտակցելով զանգվածային լրատվության միջոցների նշանակությունը ընտրությունների ժամանակ թափանցիկության ապահովման գործում, ՏՀԿ/ԹԻ հայաստանյան մասնաճյուղը դիմել էր Հայաստանի հիմնական հեռուստառադիոընկերություններին և թերթերին՝ քաղաքական գովազդների սակագների, ինչպես նաև դրանց հեռարձակման և տպագրման համար կուսակցությունների կողմից կատարված վճարումների մասին տեղեկություններ ստանալու խնդրանքով: 7 հեռուստաընկերություններից միայն 2-ը՝ Հանրային հեռուստատեսությունը և Պրոմեթևսը համաձայնվեցին տրամադրել անհրաժեշտ տեղեկություններ: Մնացած ընկերությունները հրաժարվեցին՝ նշելով հետևյալ պատճառաբանությունները.

- *ԱԼՄ* – պատասխանեց շատ կոպիտ, որ իրենք հաշվետու չեն, թե որքան գումար են ստանում և ինչպես են այն ծախսում:
- *Արմենիա* – չնայած համառ հեռախոսազանգերին, անհնար էր գտնել տնօրենին: Նա միշտ տեղում չէր, և քարտուղարուհին տեղյակ չէր, թե երբ կվերադառնա: Իսկ նրա բացակայության ընթացքում որևէ մեկը նրան չէր փոխարինում:

- *Շանթ* – նշեցին, որ չեն կարող տրամադրել տեղեկություններ, քանի որ դա բարոյական նորմերի խախտում է:
- *Կենտրոն* – ասացին, որ պետք է համաձայնեցնեն կուսակցությունների հետ, թե կարող են արդյոք տրամադրել պահանջվող թվերը, սակայն այդպես էլ չգանգահարեցին:
- *Ցայգ* – հրաժարվեցին համագործակցել:

Հանրային ռադիոն և թերթերի մեծամասնությունը (*Ազգ, Հայաստանի Հանրապետություն, Առավոտ, Հայկական ժամանակ, Այբ-Ֆե, Ռեսպուբլիկա Արմենիի, Գոլոս Արմենիի և Նովոյե Վրեմյա*) տրամադրեցին տեղեկություններ քաղաքական գովազդի համար կուսակցությունների վճարած գումարների մասին: Հետաքրքրական էր «Օրրան» և «Հայոց աշխարհ» թերթերի դիրքորոշումը այն առումով, որ չնայած դրանք չէին ստացել քաղաքական գովազդի պատվերներ, այնուամենայնիվ, հրաժարվեցին տրամադրել համապատասխան տվյալներ: Արժե նշել, որ հեռուստատեսությունների հետ համեմատած, ռադիոյում և թերթերում տեղադրված գովազդների ծավալը չափազանց աննշան էր: Ծրագիրն իրականացնող խումբը դիմել էր նաև Նախընտրական տեխնոլոգիաների կենտրոն, որի միջոցով կուսակցությունները քաղաքական գովազդի պատվեր էին տվել 20 մարզային հեռուստաընկերություններին: Այդ ընկերությունը տրամադրեց պահանջված տվյալները:

Հրատարակչություններ

Ծրագրի ընթացքում դիմում էր հղվել նաև մի շարք հրատարակչությունների՝ կուսակցությունների կողմից պատվիրված քարոզչական նյութերի քանակի և տեսակների, ինչպես նաև նրանց սակագների մասին տեղեկություններ ստանալու խնդրանքով: Հրատարակչությունների մեծ մասը՝ *Ոսկան Երևանցի, Մուսալեռ, Փրինթինֆո, Անտարես, Չանգակ 97*, տրամադրեցին համապատասխան տվյալներ: *Հակոբ Մեղապարտը* միակ ընկերությունն էր, որը նշել էր կուսակցություններից ստացված գումարը: *Տիգրան Մեծը*, որը ստացել էր քարոզչական նյութերի պատվերների մեծ մասը, հրաժարվեց տրամադրել որևէ տվյալ: Չարմանալի էր *Մեջիք և Գայիսոն* հրատարակչությունների դիրքորոշումը. նրանց ներկայացուցիչները տեղեկացրեցին, որ պատվերներ չեն ստացել, սակայն առկա էին այդ ընկերությունների կողմից հրատարակված քարոզչական տպագիր նյութեր:

Ի վերջո, «Տոսպ» տրիկոտաժի ֆաբրիկան տրամադրեց տեղեկություններ կուսակցությունների կողմից պատվիրված վերնաշապիկների ու գլխարկների քանակի և դրանց սակագների մասին:

Անկախ մոնիտորինգ

Լրատվամիջոցներ

Լրատվամիջոցների անկախ մոնիտորինգի տվյալները տրամադրվել են Երևանի մամուլի ակումբի կողմից: Նրանք հաշվարկել էին հեռուստառադիոալիքներով հեռարձակված և թերթերում տեղադրված քաղաքական գովազդների եթերաժամանակն ու տարածքները յուրաքանչյուր կուսակցության համար: Մոնիտորինգի էին ենթարկվել այն հաղորդումները, որոնց ընթացքում Էկրանի վրա առկա են եղել «Քաղաքական գովազդ» և «Նախընտրական քարոզչական հաղորդում» լուսագրերը, և այն հոդվածները, որոնք վերջում կրել են “R” նշանը: Հեռուստահաղորդումների մոնիտորինգը իրականացվել է 18:00-24:00 ընկած ժամանակահատվածում:

Քարոզարշավի ընթացքում կուսակցությունների կողմից վճարված գումարների հաշվարկման նպատակով Երևանի մամուլի ակումբի կողմից տրամադրված տվյալները (*վայրկյանները և սանտիմետրերը*) բազմապատկվեցին հեռուստառադիոընկերությունների և թերթերի կողմից սահմանված սակագներով⁴: «Շանթ» հեռուստաընկերության դեպքում քաղաքական գովազդի արժեքը կազմել էր 50-60 ԱՄՆ դոլար, ուստի գնահատման համար օգտագործվել էր միջին գինը՝ 55 ԱՄՆ դոլար: Ինչ վերաբերում է «Արմենիա» հեռուստաընկերությանը, «Քաղաքական գովազդի» և «Նախընտրական քարոզչական հաղորդման» համար սահմանվել էին տարբեր գներ, որի պատճառով այդ 2 հաղորդումների վայրկյանները հաշվարկվել էին առանձին:

Նախընտրական տեխնոլոգիաների կենտրոնը տեղեկացրեց, որ հինգ կուսակցություններ պատվիրել էին վճարովի գովազդներ մարզային հեռուստացանցով, դրանցից միայն երկուսն էին պայմանագիր կնքել: Մնացած երեքը վճարել էին կանխիկ դրամով՝ առանց պայմանագրի:

Քարոզչական նյութեր

Ծրագրի ընթացքում հաշվարկվել են կուսակցությունների **պաստառների** արժեքը⁵: Ծրագիրն իրականացնող խումբը դիմել էր համապատասխան հրատարակչությունների՝ պարզելու պաստառների սակագները: Զանի որ տարբեր ընկերություններ առաջարկում էին գեղչային տարբեր համակարգեր, կուսակցությունների ծախսերի հաշվարկման ընթացքում 5,000 և ավելի տպաքանակով պաստառների համար կիրառվել է 20% գեղչ: Սակայն, անհրաժեշտ է հաշվի առնել, որ կուսակցություններին կարող էին տրամադրվել ավելի մեծ գեղչեր տարբեր նկատառումներով՝ համակրանք, հովանավորչություն, վախ և այլն:

⁴ Սակագների մի մասը հրապարակվել էր «Հայկական ժամանակ» օրաթերթի 19.04.2003թ. համարում, իսկ մյուսը մասը ստացվել էր ՀԼՄ-ներից:

⁵ Հնարավոր է, որ կուսակցություններն ունեցել են ավելի շատ պաստառներ, քան բացահայտվել է ծրագրի շրջանակներում:

Նույն մեթոդը կիրառվել է **հրապարակումների**⁶ համար (*բուկլետներ, բրոշյուրներ, օրացույցներ, և այլն*): Կատարված հաշվարկների արդյունքները քննարկվել են փորձագետների հետ: Հաշվարկվել են նաև ընտրական քարոզչության նպատակով կուսակցությունների կողմից օգտագործված վերնաշապիկների, գլխարկների և այլ նյութերի արժեքները:

Ծրագիրն իրականացնող խումբը հաշվել էր Երևան քաղաքում տեղադրված **գովազդային մեծ վահանակները**: Գոյություն են ունեցել երեք տարբեր չափերի մեծ վահանակներ՝ $12մ^2$, $14մ^2$ և $18մ^2$: Հաշվարկների ժամանակ օգտագործվել է միջին չափը՝ $14,66մ^2$: Ըստ Երևան քաղաքի մի շարք համայնքների տրամադրած տվյալների, քաղաքական գովազդի տեղադրման համար կուսակցությունների հետ կնքվել է 20 օրյա պայմանագիր, սակայն վահանակները տեղադրված են եղել միջինում 15 օր ժամկետով: 30 օրվա համար $1մ^2$ արժեքը կազմել է 30 ԱՄՆ դոլար: «Նուշիկյան ասոցիացիա» և «Չեբրա» ընկերությունները, որոնք պատասխանատու են գովազդային մեծ վահանակների պատրաստման և տեղադրման համար, հայտնեցին, որ գովազդի տեղադրման արժեքը կազմել է 50-60 ԱՄՆ դոլար: Հաշվարկների համար օգտագործվել է միջին գումարը՝ 55 ԱՄՆ դոլար: Գովազդի ձևավորման արժեքը գնահատվել է 150 ԱՄՆ դոլար: Այսպիսով, մեկ կուսակցության համար գովազդային վահանակի արժեքը հաշվարկվել է հետևյալ բանաձևով. (վահանակների քանակ $\times$ պատրաստման գին) + (վահանակների քանակ $\times$ 15 օրվա վարձակալման գին) + ձևավորման գին + տեղադրման գին:

Քարոզարշավի ընթացքում հաշվարկվել են նաև **միջոցառումների** կազմակերպման համար կուսակցությունների կողմից կատարված ծախսերը՝ օգտագործելով համապատասխան ընկերությունների (*օր.՝ Շարմ, Ալֆա-Էլ և այլն*) կողմից տրամադրված սակագները: Քանի որ գները տարբեր էին, հաշվարկների համար օգտագործվել են նվազագույն սակագներ:

Ի վերջո, հաշվարկվել են կուսակցությունների **գովազդային տեսահոլովակները**: Չնայած ծրագրով նախատեսված չլինելուն՝ ծրագիրն իրականացնող խումբը հաշվել է Արմենիա և Հանրային հեռուստատեսություններով հեռարձակված տեսահոլովակների քանակը յուրաքանչյուր կուսակցության համար: Ինչ վերաբերվում է տեսահոլովակների պատրաստման սակագներին, ապա դրանք զգալիորեն տարբեր էին ($500 - 1,200$ ԱՄՆ դոլար): Այդ իսկ պատճառով, համաձայն փորձագետների խորհրդի, գովազդները գնահատվել են դրանց արտադրության նվազագույն արժեքով՝ 500 ԱՄՆ դոլարով:

Համեմատական վերլուծություն

Տվյալների մշակման ավարտից հետո, անկախ մոնիտորինգի արդյունքները համեմատվել են կուսակցությունների կողմից տրամադրված տվյալների հետ՝ հնարավոր հակասությունները բացահայտելու համար: Ծրագիրն իրականացնող խումբը հանդիպել է

⁶ Մոնիտորինգի են ենթարկվել միայն նրանք, որոնք տրամադրվել են կուսակցությունների կողմից կամ ձեռք են բերվել ծրագիրն իրականացնող խմբի կողմից:

տեղեկություններ տրամադրած 10 կուսակցությունների հետ այդ հակասությունները պարզաբանելու նպատակով (*«Արժանապատվություն, ժողովրդավարություն, հայրենիք» դաշինքի ներկայացուցիչը չի հանդիպել խմբի հետ*): Կուսակցությունների կողմից պարզաբանումները ներկայացված են Հավելված 3-ում:

ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ակնհայտ է, որ կուսակցությունների դիրքորոշումներն ու ծրագրերը զանազան քարոզչական միջոցներով (ՉԼՄ-ներ, հրապարակումներ, ընտրազանգվածի հետ հանդիպումներ և այլն) հանրությանը հասանելի դարձնելու համար անհրաժեշտ են բավական մեծ գումարներ: Կուսակցությունների պատշաճ ֆինանսավորումը կարևոր է նաև ուժեղ քաղաքական համակարգ ստեղծելու, առողջ մրցակցություն ապահովելու, ինչպես նաև ընտրական գործընթացում քաղաքացիների ակտիվ մասնակցությունը քաջալերելու համար:

Սակայն, իրականում միջոցների հայթայթման գործընթացը հաճախ վնասում է քաղաքական համակարգը, հատկապես երբ առկա գումարները չեն բավարարում կուսակցությունների քարոզարշավի իրականացման հետ կապված ծախսերը հոգալու համար: Քարոզարշավի ծախսերի զգալի աճը ստիպում է կուսակցություններին գումարներ հայթայթել ապօրինի կամ ոչ բարոյական ճանապարհներով: Հաճախ գումարը տրամադրվում է տվյալ կուսակցությանը ակնկալվելիք «լավության» դիմաց (*տարբեր ծառայություններից, արտոնյալ դիրքից օգտվելու հնարավորություն և այլն*): Կուսակցությունների ֆինանսավորման փակ համակարգը նման ապօրինի գործողությունների ընդլայնմանը նպաստող հիմնական գործոններից է:

Կուսակցությունների ֆինանսական միջոցների թափանցիկության հարցը պատշաճ ուշադրության չի արժանացել Հայաստանում: Ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն, կուսակցությունների հայտարարագրերը պետք է հրապարակվեն ԿԸՀ-ի կողմից՝ նրա իսկ սահմանած կարգով: 2003թ. նախագահական երկփուլ ընտրություններից հետո հրապարակվել են թեկնածուների հիմնադրամների միայն ընդհանուր մուտքերն ու ելքերը, ինչն ըստ պրն. Սահրադյանի⁷, պայմանավորված է այն հանգամանքով, որ կուսակցությունների ֆինանսավորման որևէ խախտումներ չեն հայտնաբերվել: Ակնհայտ է, որ ԿԸՀ-ի նման որոշումը խախտում է քաղաքացիների իրավունքը՝ վերահսկելու կուսակցությունների ֆինանսական միջոցները, և նպաստում է ընտրական գործընթացի ոչ թափանցիկ և անվստահելի լինելուն:

Ծրագրի կողմից կիրառված մեթոդաբանությունը ներառում էր կուսակցությունների նախընտրական հիմնադրամների եկամուտների և ծախսերի մոնիտորինգ: Սակայն,

⁷ Ծրագրի սկզբին, ՏԶԿ/ԹԻ Հայաստանյան մասնաճյուղը նամակ էր ուղարկել ԿԸՀ-ի նախագահ Արտակ Սահրադյանին, խնդրելով բացատրել Նախագահական ընտրություններում մասնակցած թեկնածուների եկամուտների և ծախսերի միայն ընդհանուր գումարների հրապարակման պատճառը:

կուսակցությունները և դաշինքները ծրագրի փորձագետներին տրամադրել էին տվյալներ միայն նախընտրական հիմնադրամում մուծումներ կատարած ֆիզիկական և իրավաբանական անձանց թվի և գումարի վերաբերյալ: Կուսակցությունների եկամուտների աղբյուրները չիրապարակվեցին նաև ԿԸՀ-ի կողմից, չնայած այն հանգամանքին, որ դա պահանջվում էր օրենսդրորեն և առկա էր նաև հանրային հետաքրքրվածություն ի դեմս լրագրային հրապարակումների: Որոշ դեպքերում կուսակցությունները հակված են նույնիսկ իշխանություններից թաքցնելու իրենց եկամտի աղբյուրները: Ինչպես նշել էին որոշ կուսակցությունների ներկայացուցիչներ, մուծումներ կատարող իրավաբանական անձանց չբացահայտելու նպատակով վերջիններիս կողմից հատկացված գումարները բաշխվում էին ֆիզիկական անձանց միջև:

Իրավաբանական անձանց չբացահայտման պատճառները կարող են տարբեր լինել. ֆինանսավորում օտարերկրյա կամ այլ անօրինական աղբյուրներից, երկրում գործարար հատվածի ոչ նորմալ կարգավորվում և այլն: Ձեռներեցների մեծ մասը հակված է թաքցնելու շրջանառության իրական ծավալները: Հետևաբար, գործարարները կարող են խնդիրներ ունենալ հարկային մարմինների հետ, եթե բացահայտվեն որևէ կուսակցության նախընտրական հիմնադրամում նրանց կողմից կատարված մուծումները: Բացի այդ, հաշվի առնելով ընդդիմադիր և իշխանամետ կուսակցությունների միջև քաղաքական մրցակցությունը, ձեռներեցները խուսափում են բացեիբաց ֆինանսավորել ընդդիմադիր կուսակցություններին, որպեսզի խնդիրներ չունենան հարկային մարմինների հետ: Այնուամենայնիվ, հնարավոր է, որ որոշ գործարարներ մուծումներ կատարել են ընդդիմադիր կուսակցությունների հիմնադրամներում, իսկ կուսակցությունները նախընտրել են թաքցնել ֆինանսավորման իրական աղբյուրները:

Կուսակցությունների կողմից նախընտրական քարոզչության ընթացքում ծախսված գումարների չափը նույնպես խնդրահարույց է: Պատճառներից մեկը կուսակցությունների նախընտրական հիմնադրամների չափի սահմանափակումն է: Ինչպես ցույց են տվել անկախ մոնիտորինգի արդյունքները, 21 կուսակցություններից և դաշինքներից երեքը գերազանցել են նախընտրական հիմնադրամի սահմանը: Ինչ վերաբերում է մյուսներին, բոլոր կուսակցությունների կողմից տրամադրված տվյալների և մոնիտորինգի արդյունքների միջև առկա էին հակասություններ: Միայն «Ազգային համաձայնություն» կուսակցության ներկայացրած տվյալներն էին համընկնում ծրագրի արդյունքների հետ:

Ծրագրի իրականացման ընթացքում դիտարկված ընդհանուր միտումն այն էր, որ գրեթե բոլոր կուսակցությունները խուսափում էին իրենց կատարած բոլոր ծախսերը արտացոլել հիմնադրամում: Իրականում, ինչպես նշեցին կուսակցություններից շատերը, նախընտրական հիմնադրամի գաղափարը չի գործում: Հիմնադրամի ֆինանսական հոսքերը ներկայացնում էին օրենսդրության պահանջների համաձայն, մինչդեռ իրականում խոշոր գումարները ծախսվում էին հիմնադրամից դուրս: Հիմնվելով անկախ մոնիտորինգի տվյալների, ինչպես նաև կուսակցությունների ու ծառայություններ մատուցող տարբեր ընկերությունների մեկնաբանությունների վրա՝ կարելի է անել հետևյալ եզրահանգումները.

1. Հեռուստատեսությամբ հեռարձակված քաղաքական գովազդի վերաբերյալ կուսակցությունների կողմից տրամադրված տվյալների և անկախ մոնիտորինգի արդյունքների միջև առկա էին հակասություններ: Կարելի է ենթադրել, որ կա՛մ հեռուստաընկերությունները կուսակցություններին տրամադրել էին ավելի մեծ եթերաժամ, քան ներկայացրել էին իրենց պաշտոնական փաստաթղթերում, կա՛մ որոշ կուսակցություններին տրամադրել էին ավելի մեծ զեղչեր (*երկուսն էլ համարվում են օրենքի խախտում*):

2. Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ հրատարակչության անվանումը եւ տպաքանակը նշվեն տպագիր նյութերի վրա: Մինչդեռ, ինչպես նշել են առանձին կուսակցություններ և փորձագետներ, քարոզչական նյութերի տպաքանակը որոշ դեպքերում եղել է ավելին, քան նշված է եղել պաշտոնապես: Եղել են դեպքեր, երբ քարոզչական նյութերը տպագրվել են նախքան քարոզարշավի սկսվելը և լայնորեն տարածվել են քարոզարշավի ընթացքում: Կարելի է ենթադրել, որ կուսակցությունների նման գործելակերպը նպատակ էր հետապնդում թաքցնելու նախընտրական հիմնադրամից կատարված ծախսերը: Եղել են նաև դեպքեր, երբ գործառնությունները կատարվել են առանց ծառայություններ մատուցող ընկերությունների հետ պայմանագիր ստորագրելու:

Վերը նշված անօրինականությունների պատճառները տարբեր են: Կուսակցությունների համար այն շահավետ է, քանի որ պատշաճ փաստաթղթերի բացակայության դեպքում հնարավոր է խուսափել 20% ԱԱՀ վճարելուց: Սակայն արժե նշել, որ ոչ միայն կուսակցություններն են շահագրգռված ապօրինի գործողություններով: Ծառայություններ մատուցող ընկերությունները հաճախ իրենք են առաջարկել «շահավետ գործարք», եթե պատվերի դիմաց չեն պահանջվել հաշվապահական փաստաթղթեր: Այսպիսով, նրանք կարող էին խուսափել հարկերից, թաքցնել իրենց շրջանառության իրական ծավալները և հաճախորդ գրավել խոշոր զեղչեր առաջարկելով: Բավարար գումարներ ունեցող կուսակցությունների համար սովորաբար գործառնությունների պատճառ կարող էր հանդիսանալ նաև նախընտրական հիմնադրամի սահմանափակումը: Նրանք գտնում էին օրենքը շրջանցելու ուղիներ՝ կատարված ծախսերը հիմնադրամում չարտացոլելու համար:

Այնուամենայնիվ, տվյալների միջև անհամապատասխանությունը ոչ միշտ է կարելի բացատրել վերը նշված հանգամանքներով: Ազգակցական/ընկերական կապերը և հովանավորչությունը, որոնք լայն տարածված են Հայաստանում, նույնպես պատճառ են հանդիսանում կուսակցություններին զեղչեր կամ անվճար ծառայություններ տրամադրելու համար:

Նախընտրական հիմնադրամի հետ կապված մեկ այլ խնդիր է քարոզարշավի ընթացքում գրասենյակի և աշխատակիցների համար կատարվող ծախսերի օրենսդրական ոչ հստակ տարբերակումը: Քարոզարշավի ընթացքում կուսակցությունները շարունակում էին իրենց մշտական հաշվեհամարից վճարել կուսակցության հիմնական գրասենյակների ծախսերը, մինչդեռ ժամանակավոր ենթագրասենյակների ծախսերը փոխհատուցվում էին

նախընտրական հիմնադրամի միջոցներից: Ի դեպ, կուսակցությունները հակված էին թաքցնելու ժամանակավոր գրասենյակների հետ կապված իրական ծախսերը, նշելով, որ այդ տարածքները տրամադրվել են անվճար կուսակցության անդամների կամ համակիրների կողմից: Սակայն միշտ չէ, որ դա համապատասխանում էր իրականությանը, քանի որ ըստ ոչ պաշտոնական աղբյուրների, որոշ կուսակցություններ վարձակալել էին գրասենյակներ՝ 150 - 500 ԱՄՆ դոլարի սահմաններում:

Կուսակցությունները նշել էին, որ իրենց աշխատակիցների թիվը կազմել է 25-ից 350 մարդ⁸, որոնցից բոլորն աշխատել էին կամավոր հիմունքներով: Երկու կուսակցությունների կամավորների թիվը կազմել է 2,000 և 8,000 մարդ: Միևնույն ժամանակ, միայն մեկ կուսակցություն էր նշել, որ իրենք պարզևավճար են տվել կամավորներին: Ըստ ոչ պաշտոնական աղբյուրների, որոշ կուսակցություններ իրականում վարձատրել էին կամավորներին 20-200 ԱՄՆ դոլարի սահմաններում: Ակնհայտ է, որ կուսակցությունները թաքցնում էին այս տվյալները՝ եկամտահարկի և սոցիալական հարկերի (*աշխատավարձի մոտավորապես 33%-ը*) վճարումից խուսափելու և դրանք նախընտրական հիմնադրամում չարտացոլելու նպատակով:

Չափազանց բարդ էր նաև ստուգել քարոզարշավային շրջագայությունների հետ կապված ծախսերը: Օրինակ, որոշ կուսակցություններ նշել էին, որ իրենց ընկերները տրամադրել են ավտոմեքենաներ շրջաններ այցելելու համար: Որոշ կուսակցություններ չէին բացահայտել օրապահիկը և հյուրանոցային ծախսերը: Վերջապես, կառավարող կուսակցությունները քարոզչական ուղևորությունների համար օգտագործել էին վարչական ռեսուրսներ (*ավտոմեքենաներ, բենզին և այլն*)⁹, առանց դրանք ընդգրկելու նախընտրական ծախսերի ցանկում:

Ինչպես արդեն նշվել է, ԿԸՀ-ն պատասխանատու է այս բոլոր խախտումների վերահսկման և անհրաժեշտ գործողությունների ձեռնարկման համար: Ըստ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության հաշվետվության, 2003թ. խորհրդարանական ընտրությունների ընթացքում չեն գրանցվել կուսակցությունների նախընտրական հիմնադրամների հետ կապված որևէ իրավախախտումներ (*հաշվետվությունը հաստատվել է ԿԸՀ-ի կողմից 2003 թ.-ի հուլիսի 18-ին*): ԿԸՀ-ի միայն մեկ անդամ՝ «Արդարություն» դաշինքի ներկայացուցիչը չի ստորագրել հաշվետվությունը, իսկ «Ազգային միաբանություն» կուսակցության ներկայացուցիչը ձեռնպահ է մնացել: Սա, իհարկե, օրենքի անկատարության և օրենքին հետևելու և այն կիրարկելու պետական հաստատությունների անպատրաստակամության նշան է:

Խորհրդարանական ընտրություններից հետո, «Արդարություն» դաշինքը դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան՝ ընտրությունների արդյունքների բողոքարկման հայցով: Ծրագրի կողմից բացահայտված արդյունքները ներկայացվել են որպես կուսակցությունների

⁸ Այս թվերը չեն ընդգրկում հիմնական աշխատակիցներին, որոնք վարձատրվում են կուսակցությունների հաշվեհամարից:

⁹ Ծրագրի շրջանակներում չի իրականացվել նախընտրական քարոզարշավի ընթացքում վարչական ռեսուրսների չարաշահման մոնիտորինգ, թեև այդ հարցը լայնորեն լուսաբանվել է լրատվամիջոցների կողմից:

կողմից կատարված որոշ խախտումների փաստեր: Չնայած հայցը մերժվել է, ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունել է, որ կուսակցությունների նախընտրական հիմնադրամի թափանցիկության և հաշվետվության խնդիրն առկա է և պահանջում է պատշաճ ուշադրություն:

ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄ

Ժողովրդավարական երկրներում քաղաքական կուսակցությունները հանդիսանում են քաղաքական համակարգի կարևոր տարր: Դրանք կառույցներ են, որոնք ծնվում են հասարակության ներսում և կոչված են ներկայացնելու հասարակության շահերն ու պահանջները: Ներկայումս Հայաստանում քաղաքական մրցակցությունը վերածվել է իշխանության և անձեռնմխելիության համար մղվող մրցավազքի՝ արժեզրկելով կուսակցականության գաղափարի հիմնական արժեքները: Ակնհայտ է, որ կուսակցությունները պետք է ունենան բավարար միջոցներ այս մրցակցությունում գոյատևելու և քաղաքական ասպարեզում հաջողության հասնելու համար:

Կուսակցությունների ֆինանսավորումը Հայաստանում դարձել է կոռուպցիոն երևույթների պատճառ: Տնտեսական վատ պայմանները և կուսակցությունների հանդեպ քաղաքացիների անվստահությունը հանգեցնում են կուսակցությունների իրական կողմնակիցների՝ թե՛ ֆիզիկական և թե՛ իրավաբանական անձանց նվազման և նրանց կողմից կատարված մուծումների սահմանափակման: Դա իր հերթին բերում է կուսակցությունների կողմից ապօրինի և ոչ բարոյական ճանապարհներով գումարներ հայթայթելուն: Միաժամանակ գործարար հատվածի կողմից կուսակցությունների ֆինանսավորումը մեծացնում է վերջիններիս կախվածությունը «բարեգործներից», որոնք սովորաբար ունեն հետագա փոխադարձ շնորհների կամ ծառայությունների ակնկալիքներ:

Կուսակցության ծախսերի իրականացումը նույնպես զերծ չէ ապօրինությունից: Ըստ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության հաշվետվության, բոլոր կուսակցությունները բավարարել են նախընտրական հիմնադրամի հետ կապված օրենսդրական պահանջները և այդ առնչությամբ չեն հայտնաբերվել որևէ խախտումներ: Մինչդեռ, ինչպես բացահայտվել է ծրագրի ընթացքում, գրեթե բոլոր կուսակցությունների տվյալների և մոնիտորինգի արդյունքների միջև առկա են անհամապատասխանություններ: Սրանից ելնելով, կարելի է հանգել երկու էական եզրակացության: Առաջին, օրենսդրությունն անկատար է և կուսակցություններին ընձեռում է օրենքը շրջանցելու լայն հնարավորություն: Երկրորդ, երկրում բացակայում է օրենսդրությունը կիրարկելու և իրավիճակը վերահսկելու քաղաքական կամք: Չնայած ծրագրի արդյունքները տրամադրվել են համապատասխան պետական հաստատություններին՝ նրանցից ոչ մեկը չափազորգված չի եղել քննարկելու բարձացված հարցերը և փնտրելու դրանց լուծման ուղիներ:

Անկատար օրենսդրությունը և պետական պաշտոնյաների կողմից իրավիճակի հանդեպ անտարբերությունը ստեղծել են բարենպաստ պայմաններ կուսակցությունների

կողմից ապօրինի գործառնությունների համար: Դրա պատճառները բազմազան են. հարկերից խուսափելը, օրենսդրական պահաջներին երևութապես հետևելը և այլն: Իհարկե, ծառայություններ մատուցող ընկերությունները իրենց հերթին շահագրգռված են նման իրավիճակով և երբեմն հենց իրենք էին ստեղծում նման ապօրինի գործողությունների հնարավորություններ:

Նշված բոլոր երևույթները բերում են ոչ թափանցիկ կառավարման համակարգի ստեղծմանը և հանրային վերահսկողության բացակայությանը: Նման իրավիճակն էլ ավելի է խորացնում կուսակցությունների նկատմամբ անվստահությունը, մեծացնում ստվերային տնտեսության ծավալը, խթանում կոռումպացված գործելակերպը և, ի վերջո, բացասաբար անդրադառնում պետական բյուջեի վրա:

Ինչ վերաբերում է խնդրի լուծման ուղիներին, ապա առաջարկությունների ցանկը բավականին երկար է: Չափազանց դժվար է ընդունել կատարյալ օրենսդրություն, որը բոլոր կուսակցությունների համար կապահովի գործունեության հավասար պայմաններ: Մի դեպքում անհրաժեշտ է պահպանել որոշ սահմանափակումներ փոքր կուսակցությունների շահերը պաշտպանելու համար, մյուս դեպքում այդ սահմանափակումները պետք է լինեն խելամիտ՝ հզոր կուսակցություններին չդրդելու, որպեսզի նրանք շրջանցեն օրենքը: Ի վերջո, անկախ այն բանից, թե որքանով է կատարյալ օրենսդրությունը, այն պետք է կիրարկվի: Քաղաքական կոռուպցիան կարելի է կրճատել, եթե առկա է քաղաքական կամք՝ վերահսկելու կուսակցությունների ֆինանսական հոսքերը, ապահովելու թափանցիկ և հաշվետու կառավարման համակարգ և երաշխավորելու հանրության մասնակցությունը քաղաքական գործընթացում:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

**ԱՂՅՈՒՄԱԿ 1. ՎԵՐՍՏՈՒԳԻՉ-ՎԵՐԱՀՄԿԻՉ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐ**

21

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2003

Աղյուսակ 1

Վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից տրամադրված տվյալներ

